

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները կանոնակարգում են էլեկտրամատակարարող ընկերության (այսուհետև՝ մատակարար) և սպառողի փոխհարաբերությունները:

2. Մատակարարը պարտավոր է էլեկտրական էներգիա մատակարարել յուրաքանչյուր սպառողի՝ սույն կանոնների համաձայն, էլեկտրամատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) հիման վրա՝ մատակարարի կողմից կնքված (կապարակնիքով կամ հոլոգրաֆիկ կնիքով) հաշվառքի սարքի առկայության դեպքում:

2.1. Այն դեպքում, երբ սպառողի, բացառությամբ՝ բնակչության, սպառման համակարգի դրվածքային հզորությունը չի գերազանցում 0,5 կՎտ-ն, իսկ անվանական լարումը 0,22 կՎ-ն, ապա մատակարարի և սպառողի փոխհամաձայնությամբ ծախսված էլեկտրական էներգիայի հաշվառումը կարող է իրականացվել սպառողի սպառման համակարգի դրվածքային հզորությամբ՝ տեղակայվող սարքավորումների աշխատանքային ժամերին համապատասխան: Նման դեպքում մատակարարը Պայմանագրում ներառում է սպառողի սպառման համակարգի նկարագիրը, հզորությունը և աշխատանքային ժամերը:

3. Սույն կանոններում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

**էլեկտրամատակարարող
ընկերություն
(մատակարար)**

էլեկտրական էներգիայի (այսուհետև՝ էլեկտրաէներգիա) բաշխման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

սպառող (բաժանորդ)

էլեկտրաէներգիայի (հզորության) սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որը Պայմանագիր է կնքել մատակարարի հետ.

**ենթասպառող
(ենթաբաժանորդ)**

սպառող, որի էլեկտրամատակարարումն իրականացվում է այլ սպառողի ցանցերից (էլեկտրատեղակայանքներից), և որն ունի կնքված երկկողմ կամ եռակողմ Պայմանագիր.

**տեխնիկական
պայմաններ**

սպառողի սպառման համակարգը նվազագույն ծախսումներով էլեկտրական ցանցին միացնելու պայմաններ, որոնք անհրաժեշտ են էլեկտրական ցանցին միացման դիմումում նշված տեխնիկական հարաչափերով էլեկտրամատակարարման և հաշվառման ապահովման համար.

**պայմանագրային
էլեկտրական հզորություն
(պայմանագրային
հզորություն)**

էլեկտրական ակտիվ հզորության կեսժամյա միջին առավելագույն մեծությունը, որն ամրագրվում է Պայմանագրով.

**ամրագրված
տեխնոլոգիական
հզորություն**

Պայմանագրում ամրագրված այն ակտիվ հզորությունը, որը Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավոր է ապահովել մատակարարը՝ արտադրության մեջ գտնվող հումքի վերամշակումը մինչև վերջ հասցնելու կամ առանց արտադրական սարքավորումների վնասման հումքն արտադրությունից առանց խոտանի հանելու համար.

**ամրագրված վթարային
հզորություն**

Պայմանագրում ամրագրված այն ակտիվ հզորությունը, որը վթարային ռեժիմներում Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավոր է ապահովել մատակարարը՝ մարդկանց կյանքը և անվտանգությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովող էլեկտրասարքավորումների աշխատանքն ապահովելու համար.

**օպերատիվ
անձնակազմ**

էլեկտրաէներգետիկական համակարգի, ինչպես նաև սպառողի 6 (10) կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքների տեխնոլոգիական

կարգավարման գործընթացում ներգրավված մասնագիտացված անձնակազմ՝ կարգավարներ, հերթապահներ.

օպերատիվ փաստաթղթեր՝

հատուկ հաշվառման մատյաններ, որոնցում օպերատիվ անձնակազմի կողմից ժամանակագրական կարգով կատարվում են գրանցումներ՝ հաստատված սխեմաներից շեղումների, էլեկտրատեղակայանքների աշխատանքի ռեժիմների, օպերատիվ անձնակազմի կողմից կատարված գործողությունների և այլնի վերաբերյալ.

սպառողի (բաժանորդի) սպասարկման օրեր (սպասարկման օրեր)՝

տարվա բոլոր օրերը, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 09:00-ից մինչև 17:00-ն.

սահմանազատման կետ՝

էլեկտրատեղակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման.

էլեկտրամատակարարման պլանավորված ընդհատում (պլանային ընդհատում)՝

էլեկտրատեղակայանքների վրա պլանային-նախագգուշական աշխատանքներ կատարելու նպատակով սպառողի հոսանքազրկում.

էլեկտրամատակարարման չպլանավորված ընդհատում (արտապլանային ընդհատում)՝

էլեկտրատեղակայանքների (այդ թվում՝ առևտրային հաշվառքի սարքի) խափանվելու արդյունքում, ռելեական պաշտպանության կամ ավտոմատիկայի սարքերի գործողության հետևանքով սպառողի հոսանքազրկում.

հաշվառքի սարք՝

էլեկտրաէներգիայի հաշվիչ, կամ էլեկտրաէներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների համախումբ.

հաշվառքի սարքի միտումնավոր խախտում՝

հաշվառքի սարքի միացման սխեմայի կամ հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների հարաչափերի փոփոխում, հաշվիչի սկավառակի արհեստական արգելափակում կամ այլ գործողություններ, որոնք համաձայն հավատարմագրված անձի կողմից տրված եզրակացության, կատարվել են միտումնավոր, ինչը հանգեցրել է էլեկտրաէներգիայի քանակության փոփոխմանը՝ ի վնաս պայմանագրային մյուս կողմի.

սպառման համակարգ՝

սպառողի կամ նոր սպառողի էլեկտրատեղակայանքների համախումբ.

էլեկտրական ցանցին պարզեցված միացում՝

նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացում, երբ միացման համար նախատեսված է Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» N 659-Ն որոշմամբ հաստատված ստանդարտ միացման վճար և չի պահանջվում նախագծային փաստաթղթերի կազմում:

4. Սպառողի, բացառությամբ բնակչության, Պայմանագրին կցվում են էլեկտրական ցանցի և սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտերը, մատակարարի հետ համաձայնեցված նախագծի հիման վրա կազմված սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեման, իսկ տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում նաև մատակարարի և սպառողի միջև՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2003 թվականի փետրվարի 21-ին N 9-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի» պահանջների համաձայն կազմված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը:

Սպառողի (բացառությամբ բնակչության) և մատակարարի միջև կնքված Պայմանագրում նշվում են նաև տեղեկություններ սպառողի էլեկտրատեղակայանքներին միացված ենթասպառողի վերաբերյալ (անվանումը, հասցեն, առևտրային հաշվառքի սարքի տվյալները):

5. Սպառողի շահագործման մեջ գտնվող, նոր միացվող, վերակառուցվող էլեկտրատեղակայանքները պետք է համապատասխանեն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

6. Սպառողին վերաբերող սույն կանոնների բոլոր դրույթները հավասարապես տարածվում են նաև ենթասպառողի վրա:

7. Սպառողը պարտավոր է ենթասպառողի կամ մատակարարի այլ ցանցերի էլեկտրամատակարարումն ապահովելու համար իր էլեկտրատեղակայանքներով հաղորդել մատակարարի էլեկտրաէներգիան:

8. Սույն կանոնների 32-րդ կետի ա) ենթակետով և 33-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարը պարտավոր է սպառողի էլեկտրաընդունիչների էլեկտրամատակարարումը դադարեցնելիս, ապահովել այդ ժամանակահատվածում ենթասպառողի կամ իր այլ ցանցերի էլեկտրամատակարարումը: Այդ ժամանակահատվածում սպառողի էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի կորուստները հաշվառվում են մատակարարի հաշվին: Սպառողը պարտավոր է ապահովել մատակարարի անձնակազմի անարգել մուտքը իր էլեկտրատեղակայանքներ՝ դրանց միացված ենթասպառողի կամ իր այլ ցանցերի էլեկտրամատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումներ (փոխանջատումներ, լրացուցիչ սարքավորումների տեղադրում և այլն) իրականացնելու համար: Մատակարարի անձնակազմին սպառողի կողմից մուտք չտրամադրելու արդյունքում մատակարարի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով վերջինիս կրած վնասը փոխհատուցում է սպառողը:

9. Մատակարարը պարտավոր է փոխհատուցման պայմանագրով սահմանված կարգով վճարել հանձնաժողովի սահմանած մեթոդիկայով հաշվարկված սպառողի մատուցած ծառայության վճարը՝ սպառողի կողմից հաշիվը ներկայացնելուց հետո 7 օրվա ընթացքում, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10. Այն դեպքում, երբ սպառողի էլեկտրատեղակայանքների վնասման կամ հրաժարման պատճառով ընդհատվել է ենթասպառողի էլեկտրամատակարարումը կամ մատակարարի այլ ցանցերին էլեկտրաէներգիայի հաղորդումը, մատակարարը իրավունք ունի, սպառողի հետ համաձայնեցնելով կատարվելիք աշխատանքների արժեքը, սեփական միջոցներով փոխարինել կամ վերանորոգել վերջինիս այն էլեկտրատեղակայանքները, որոնք անհրաժեշտ են մատակարարի էլեկտրաէներգիան հաղորդելու համար: Նման դեպքում սպառողը պարտավոր է փոխհատուցել մատակարարի կատարած ծախսերը:

11. Մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ անձնակազմի փոխհարաբերությունները կանոնակարգվում են մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների կարգով՝ համաձայն N 1 հավելվածի:

12. Մատակարարի և սպառողի միջև ծագած վեճերը լուծվում են Հանձնաժողովի միջոցով կամ դատական կարգով:

Գ Լ ՈՒ Խ 2

ՆՈՐ ՍՊԱՏՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՏՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՎՈՂ ՍՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ծախսերը (ներառյալ նախագծմանախահաշվային, շինհավաքակցման, կարգաբերման-թողարկման աշխատանքները), այդ թվում՝ այլ անձանց էլեկտրատեղակայանքներում բջիջների տեղակայման աշխատանքների ֆինանսավորումը, կատարում է մատակարարը: Մատակարարը նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման աշխատանքների իրականացման համար գանձում է Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 659-Ն որոշմամբ հաստատված միացման վճարներ: Միացման պայմանագրի և Պայմանագրի կնքումն իրականացվում է անվճար:

13.1 Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները չեն գանձվում, երբ էլեկտրական ցանցին միացված սպառողի սպառման համակարգից առանձնացված նոր սպառողի սպառման համակարգը միացվում է էլեկտրական ցանցին՝ առանց սպառման համակարգի հզորության փոփոխության:

13.2 Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին իրականացվում է նոր սպառողի կամ կառուցապատողի կամ սպառողի (այսուհետ՝ Դիմող անձ) գրավոր դիմումի հիման վրա կամ համաձայն սույն կանոնների N 3 հավելվածի՝ էլեկտրոնային եղանակով: Դիմող անձը դիմումին կից ներկայացնում է միացվող սպառման համակարգի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1) պահանջվող հզորությունը, լարման մակարդակը, միացման տեսակը (միաֆազ, եռաֆազ), էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթերը, միացման ակնկալվող ամսաթիվը, ինչպես նաև՝ դիմողի հայեցողությամբ, էլեկտրամատակարարման հուսալիությանը վերաբերող լրացուցիչ պահանջները,

2) շինության էսքիզը կամ տարածքի հատակագիծը՝ նշելով սպառման համակարգի միացման կետը կամ էլեկտրական բեռների տեղաբաշխումը,

3) 0.4 կՎ և բարձր լարման էլեկտրական ցանցին միանալու դեպքում սպառման համակարգի տեխնիկական բնութագրերը:

13.3 Դիմող անձի դիմումը ստանալուց հետո մատակարարը սույն կանոնների 13.4 կետում սահմանված ժամկետներում.

1) մշակում է տեխնիկական պայմանները և 6(10) կՎ և բարձր լարման ցանցերին միացման դեպքում այն համաձայնեցնում սպառողի հետ,

2) մշակում է միացման տեխնիկատնտեսական հիմնավորումները,

3) կատարում է բոլոր անհրաժեշտ համաձայնեցումները պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ անձանց հետ,

4) Դիմող անձին է ներկայացնում միակողմանի կնքված միացման պայմանագիրը (հավելված N 2), որով սահմանվում են միացման աշխատանքների ավարտի ժամկետը, միացման վճարի չափը և վճարման կարգը:

13.4 Դիմումն ստանալու օրվանից մինչև միացման պայմանագրի կնքման առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում, և 25 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

2) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ մինչև 30 կՎԱ (ներառյալ) հզորությամբ պարզեցված միացման դեպքում, և 45 օրը՝ էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

3) 60 օրը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում,

4) 75 օրը՝ էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ բազմաբնակարան շենքերի միացման դեպքում:

13.5 Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև Դիմող անձին Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում, և 25 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

2) էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ՝

ա. 10 աշխատանքային օրը՝ մինչև 30 կՎԱ (ներառյալ) հզորությամբ պարզեցված միացման դեպքում,

բ. 45 օրը՝ մինչև 30 կՎԱ (ներառյալ) հզորությամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

գ. 90 օրը՝ 30 կՎԱ-ից բարձր միացման դեպքերում,

3) 120 օրը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում,

4) 270 օրը՝ էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ բազմաբնակարան շենքերի միացման դեպքում:

13.6 Այն դեպքում, երբ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար անհրաժեշտ է սպառողի պահանջածից ավելի բարձր լարման սնող գծի կամ ենթակայանի կառուցում, ապա միացման առավելագույն ժամկետը ընդունվում է համապատասխան բարձր լարման սպառողին էլեկտրական ցանցին սույն կանոնների 13.5 կետով նախատեսված միացման ժամկետը:

13.7 Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման համար դիմումը ներկայացնում, Մատակարարի հետ միացման պայմանագիրը կնքում և միացման վճարները վճարում է կառուցապատողը:

14. Պայմանագիր կնքելու և էլեկտրամատակարարումը սկսելու համար Դիմող անձը Մատակարարին է ներկայացնում էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթերը, իսկ 6(10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում նաև՝ պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը):

14.1 Ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում, առաջադրանք տվող իրավասու մարմինը էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով դիմում է մատակարարին կից ներկայացնելով սույն կանոնների 13.2 կետով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

14.2 Ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմնի դիմումը ստանալուց հետո մատակարարը մշակում և ներկայացնում է տեխնիկական պայմանները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար 5 աշխատանքային օրվա ընթացքում, III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, IV և V ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

14.3 Ճարտարապետահատակագծային առաջադրանք ստացած կառուցապատողը սույն կանոնների 13.2 կետով նախատեսված դիմումի հետ մատակարարին է ներկայացնում նաև Ճարտարապետահատակագծային առաջադրանքին կից տեխնիկական պայմանները:

14.4 Սույն գլխում նշված բոլոր ծանուցումները, առաջարկները և համաձայնեցումները մատակարարի կողմից իրականացվում են գրավոր: Դրանք դիմող անձին ներկայացնելու ծախսերը կրում է մատակարարը:»:

14.5 Սույն գլխի դրույթները չեն կիրառվում, երբ՝

1) սպառողի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միանում է ժամանակավոր (շինարարություն, սեզոնային առևտուր և այլն),

2) նոր կամ վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ տեխնիկական պայմանները սպառողին տրվել են մինչև 2008 թվականի փետրվարի 1-ը:

14.6 Հանձնաժողովը, սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, առանձին դեպքերում, ինչպես նաև, երբ սույն կանոնների 13.4 և 13.5 կետերում սահմանված ժամկետներում հնարավոր չէ ապահովել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատակարարին տրամադրվող իրավունքների, թույլտվությունների, եզրակացությունների կամ այլ փաստաթղթերի պատճառով, մատակարարի կամ Դիմող անձի դիմումի հիման վրա կարող է սահմանել էլեկտրական ցանցին միացման անհատական որոշումներ: Սույն կետում նշված դեպքերում մատակարարը պարտավոր է դիմել Հանձնաժողովին դրանք ի հայտ գալու պահից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում՝ ներկայացնելով նաև համապատասխան հիմնավորող փաստաթղթեր: Մատակարարը պարտավոր է այդ մասին նույն ժամկետում իրազեկել նաև դիմող անձին:

Գ Լ ՈՒ Խ 3

ՄՍՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԷԼԵԿՏՐԱԼՆԵՐՊԻԱՅԻ ՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված էլեկտրաէներգիայի որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են մատակարարի կամ սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, մատակարարի և սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրանցումների հիման վրա: Այդ մասին մատակարարը և սպառողը կազմում են երկկողմանի ակտ:

16. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար մատակարարը փոխհատուցում է սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

17. Մատակարարը որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվություն չի կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում սպառողը գերազանցել է պայմանագրային հզորությունը:

18. Սպառողների էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների (բացառությամբ առևտրային հաշվառքի սարքերի) ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելությունից, կրում է մատակարարը՝

1) բազմաբնակարան շենքի բնակիչների դեպքում՝ մինչև սպառողի բնակարանը,

2) 0,22 կՎ լարմամբ սնվող մնացած սպառողների դեպքում՝ մինչև սպառողի շենքի, շինության կամ տարածքի կանգնակը կամ բաշխիչ վահանը,

3) 0,4 կՎ և բարձր լարմամբ սնվող սպառողների դեպքում՝ մինչև Պայմանագրով ամրագրված սահմանազատման կետը:

19. Առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման և փոխարինման ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելիությունից, կրում է մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքերի շահագործման (ներառյալ՝ սպասարկման, ստուգաչափման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելիությունից, կրում է մատակարարը, բացառությամբ սույն կանոնների 20-րդ և 64-րդ կետերով սահմանված դեպքերի:

20. Առևտրային հաշվառքի սարքերի շահագործման ընթացքում դրանց ամբողջականության պահպանման ծախսերը և պահպանման պատասխանատվությունը կրում է սպառողը, եթե վերջինս բազմաբնակարան շենքում գտնվող սպառող չէ, առևտրային հաշվառքի սարքը տեղակայված է սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում և այդ

մասին նշված է Պայմանագրում: Սույն կանոնների իմաստով սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանումը նրա պահպանումն է արտաքին մեխանիկական վնասվածքներից: Սպառողը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում, եթե այդպիսի վնասվածքները առաջացել են սպառողի կամքից անկախ արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների արդյունքում:»:

Գ Լ ՈՒ Խ 4

ՄՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՍԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Մատակարարը պարտավոր է սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին սույն կանոնների համապատասխանաբար 24-րդ և 26-րդ կետերով սահմանված պահանջների համաձայն:

23. Մատակարարը պարտավոր է վարել սպառողների էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների հաշվառման առանձին գրանցամատյաններ, որոնցում նվազագույնը պետք է նշվեն.

ա) ընդհատման ամսաթիվը, ժամը և պատճառը,

բ) էլեկտրամատակարարման վերականգնման ամսաթիվը և ժամը,

գ) բաշխիչ ցանցի էլեկտրատեղակայանքի անվանումը, որի պատճառով տեղի է ունեցել ընդհատումը:

24. Էլեկտրամատակարարման պլանային ընդհատման և վերականգնման ժամկետների մասին մատակարարը պարտավոր է սպառողին տեղեկացնել ընդհատմանը նախորդող օրվա ընթացքում՝ վերջինիս հասու հեռուստաալիքով՝ 2 անգամ. առաջինը՝ 18:00-ից 20:00-ն, իսկ երկրորդը՝ 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում:

25. Սպառողը (բացառությամբ բնակչության) իրավունք ունի, մատակարարի հետ համաձայնեցնելով, Պայմանագրում ամրագրել էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ: Նման դեպքում էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին մատակարարը սպառողին պարտավոր է տեղեկացնել Պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

26. Էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատման և վերականգնման ժամկետների մասին տեղեկատվությունը մատակարարը պարտավոր է սպառողին տրամադրել սույն կանոնների 74-րդ կետով նախատեսված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով:

27. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-17:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սակայն ոչ ավելի, քան 6 ժամ տևողությամբ:

28. Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝

1) քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝

ա. բազմաբնակարանային շենքերի սպառողներինը՝ 2 ժամում.

բ. այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում.

գ. մյուս բոլոր դեպքերում՝ 4 ժամում,

2) գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝

ա. այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում.

բ. մյուս բոլոր դեպքերում՝ 8 ժամում,

3) քաղաքային և գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմաններից դուրս՝

ա. այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում.

բ. մյուս բոլոր դեպքերում՝ 12 ժամում:

28.1. Սույն կանոնների 27-րդ և 28-րդ կետերում նշված պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողությունը տարեկան կտրվածքով չպետք է գերազանցի՝ այն սպառողների համար, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի

(ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 10 ժամը, քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում գտնվող մյուս սպառողների համար՝ 24 ժամը, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ 72 ժամը: Միևնույն ժամանակ, եթե սպառողի էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են Պայմանագրով սահմանել այդ ժամանակահատվածը:

29. Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել վերջինիս կողմից տեղեկացվելուց հետո ոչ ուշ, քան՝

ա) 2 ժամում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.

բ) 4 ժամում՝ Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.

գ) 16 ժամում՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրերից դուրս:

Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը վերականգնելուց հետո պարտավոր է նրա հետ կազմել ակտ՝ էլեկտրամատակարարման ընդհատման և վերականգնելու ամսաթվի ու ժամի վերաբերյալ: Ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը տրվում է սպառողին, իսկ մյուսը պահվում է մատակարարի մոտ:

Մատակարարը պարտավոր է վարել այդ ակտերի հաշվառման առանձին գրանցամատյան, որում առնվազն պետք է նշվեն՝

ա) հոսանքազրկված սպառողի բնակության վայրը, հասցեն և հեռախոսահամարը,

բ) ընդհատման մասին տեղեկանալու ամսաթիվը և ժամը,

գ) էլեկտրամատակարարման վերականգնման ամսաթիվը և ժամը,

դ) կազմված ակտի հերթական համարը, կազմման ամսաթիվը և ժամը:

Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր հնարավոր միջոցները սույն զլխում նկարագրված դեպքերում սպառողի էլեկտրամատակարարումը հնարավորինս կարճ ժամկետում վերականգնելու համար:

Գ Լ ՈՒ Խ 5

ՄՊԱՏՈՂԻ ԷԼԵԿՏՐՈՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

30. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են Հանձնաժողովի 2003 թվականի փետրվարի 21-ին N 9-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի» պահանջների համաձայն կազմված ծրագրերով:

31. Էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերը կիրառվում են էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած այնպիսի իրավիճակներում, երբ սպառողին մատակարարվող էլեկտրաէներգիայի որակը կամ էլեկտրատեղակայանքների ամբողջականությունն ապահովելու համար էլեկտրամատակարարման սահմանափակումներն անխուսափելի են: Էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերը կազմում են ելնելով համակարգի անվտանգությունն ու հուսալիությունն ապահովող հաստատված ցուցանիշներից, ինչպես նաև որոշակի սպառողների էլեկտրամատակարարման առաջնահերթության պայմաններից: Այդ սպառողների ցանկը ամեն տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՄՊԱՏՈՂԻ ԷԼԵԿՏՐՈՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

32. Մատակարարը պարտավոր է դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում:

33. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝

ա) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն կանոններով և Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարումներ չկատարելու դեպքում.

բ) եթե մատակարարի անձնակազմին համապատասխան վկայականը ներկայացնելու դեպքում թույլ չի տրվել սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով կամ պայմանագրով սահմանված կարգով սպասարկել սպառողի տնօրինվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

գ) եթե սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով:

Մատակարարը պարտավոր է վարել սպառողների էլեկտրամատակարարման դադարեցումների հաշվառման առանձին գրանցամատյան, որում նվազագույնը պետք է նշվեն սույն կանոնների 23-րդ կետում նշված տվյալները:

Սույն կետի բ) ենթակետը չի տարածվում բնակչության վրա:

34. Մատակարարը էլեկտրամատակարարումը վերականգնում է առանց սպառողին նախազգուշացնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դա սահմանված է Պայմանագրով:

Գ Լ ՈՒ Խ 7

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«35. Առևտրային է համարվում Պայմանագրում նշված հաշվառքի սարքը:

Պայմանագրում պարտադիր նշվում են հաշվիչի, ինչպես նաև հոսանքի և լարման տրանսֆորմատորների գործարանային համարները և տեխնիկական հարաչափերը:»:

36. Սպառողը պատասխանատվություն է կրում միայն այն առևտրային հաշվառքի սարքերի ամբողջականության և պահպանման համար, որոնք տեղակայված են իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում և այդ մասին նշված է պայմանագրում: Սպառողի սեփականությունը հանդիսացող, բայց իր սեփական կամ իր կողմից տնօրինվող տարածքներից դուրս տեղադրված հաշվառքի սարքերի ամբողջականության և պահպանման համար պատասխանատվությունը կրում է մատակարարը:

37. Սպառողն իրավունք ունի լրացուցիչ կնքել առևտրային հաշվառքի սարքը:

38. Եթե սպառողը (բացառությամբ բնակչության) տեղադրել է վերստուգիչ հաշվառքի սարք, ապա դրա վերաբերյալ տվյալները նշվում են Պայմանագրում: Մատակարարն իրավունք ունի կնքել վերստուգիչ հաշվառքի սարքը: Վերստուգիչ հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման և էլեկտրաէներգիայի հաշվարկներում կիրառման կարգը սահմանում են կողմերը՝ Պայմանագրով:

39. Առևտրային հաշվառքի սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ.

ա) բացառվի նրանց մեխանիկական վնասվածքների կամ միջավայրի անթույլատրելի ազդեցության հնարավորությունը,

բ) բացառվի կողմնակի անձանց միջամտությունը հաշվառքի սարքերի միացման սխեմային և նրանց աշխատանքին,

գ) ապահովվի սպառողի և մատակարարի ներկայացուցչի համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը,

դ) ապահովվի հաշվառքի սարքերի պահպանումը,

ե) վտանգ չսպառնա մարդկանց կյանքին և առողջությանը:

40. Բնակչության առևտրային հաշվիչները տեղակայվում են ընդհանուր կամ անհատական արկղերում: Բազմաբնակարան շենքերում առևտրային հաշվիչները տեղակայվում են յուրաքանչյուր մուտքի ընդհանուր արկղերում:

Արկղերի տեղակայման վայրը ընտրվում է այնպես, որ ապահովվի էլեկտրական լարման սահմանված մեծությունը սպառողի ընդունման վահանակի վրա:

Գ Լ ՈՒ Խ 8

ՍՊԱՌԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

41. Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային ամսում սպառողի առևտրային հաշվիչի գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը հաշվիչի գործակցով (հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գարծակիցների արտադրյալ) բազմապատկելու միջոցով: Եթե առևտրային հաշվիչն ամիջապես գրանցում է էլեկտրաէներգիայի քանակը, որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը: Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը, որը հաշվարկվում է Պայմանագրով սահմանված կարգով: Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով, համաձայն սույն կանոնների 12-րդ գլխի պահանջների:

42. 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար, երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված

էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը: Նվազագույն բեռնվածքի ժամանակահատվածի տևողությունը և այդ ժամանակահատվածում միացված գումարային բեռնվածքի մեծությունները, դրանց հաշվարկի կարգի հետ միասին, հավելվում են Պայմանագրին և վերանայվում յուրաքանչյուր տարի կամ կողմերից մեկի գրավոր պահանջով տարվա ընթացքում՝ նվազագույն բեռնվածքի փոփոխման դեպքում:

43. Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Մատակարարը պարտավոր է սպառողի (բացառությամբ բնակչության) առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել նրա ներկայությամբ, եթե վերջինս ներկայացրել է նման գրավոր պահանջ, կամ այդ պարտավորությունը ամրագրված է պայմանագրում: Նման դեպքում մատակարարը պարտավոր է սպառողին նախապես՝ առնվազն երեք օր առաջ, գրավոր տեղեկացնել առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց սպառողի:

44. Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման էլեկտրատեղակայանքների էլեկտրամատակարարման համար որպես պայմանագրային կողմ հանդես է գալիս բազմաբնակարան շենքի կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ սեփականատերերի կողմից լիազորված անձը:

Գ Լ ՈՒ Խ 9

ՍՊԱՌԿԱՍԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱՍԾ ԺԱՄԿԵՏԻ ԽԱՆՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՍԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է տվյալ լարման մակարդակի և ժամային տիրույթների համար (եթե առևտրային հաշվառքի սարքն ունի նման տարանջատված հաշվառման հնարավորություն) Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրաէներգիայի քանակությունների արտադրյալների գումարով:

46. Մատակարարը պարտավոր է.

ա) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում սպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

բ) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, հանրապետական սփռման 2 հեռուստաընկերությունների միջոցով 2-ական անգամ, ժամը 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում հայտարարել նախորդ ամսվա ընթացքում սպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղադրելու օրը:

գ) սպառողի դիմելու դեպքում տրամադրել վերջինիս նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը՝ սույն կետի ա) ենթակետում նշված կետերում, ինչպես նաև սույն կանոնների 74-րդ կետով նախատեսված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով:

դ) նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի դիմաց բնակչությանը ներկայացվող վճարման փաստաթղթում ապահովել հետևյալ տեղեկատվության առկայությունը. սպառողի անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքները (իսկ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով էլեկտրաէներգիայի սպառման ցուցմունքը), առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքների գրանցման օրը, հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակը (արտահայտված կիլովատտ ժամերով, իսկ բազմասակագնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով սպառված էլեկտրաէներգիայի քանակը) և արժեքը (արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը), պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին (արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) և վճարման ամսաթիվը: Մնացած բոլոր սպառողներին՝ նրանց գրավոր պահանջի դեպքում, մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր ամիս ծանուցել ինչպես բնակչության վճարման փաստաթղթերում՝ սույն ենթակետով ամրագրված տեղեկատվության, այնպես էլ տվյալ սպառողի կողմից հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործվող այլ ցուցանիշների մասին: Ընդ որում, այդ սպառողները մատակարարից կարող են պահանջել ծանուցումը ներկայացնելու գրավոր կամ էլեկտրոնային փոստով: Ծանուցումը փոստով առաքելու պահանջի դեպքում մատուցված ծառայության համար վճարում է սպառողը, իսկ էլեկտրոնային փոստով ծանուցումն իրականացվում է անվճար:

Նախորդ ամսվա էլեկտրաէներգիայի ծախսի վճարման հաշիվը փոստով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելու՝ սպառողի գրավոր պահանջի կամ այդ պարտավորությունը Պայմանագրով սահմանված լինելու դեպքում մատակարարը պարտավոր է կատարել այդ պահանջը՝ սույն կետով

սահմանված ժամկետում: Վճարման հաշիվը փոստով առաքելու պահանջի դեպքում այդ ծառայության համար վճարում է սպառողը: Վճարման հաշվի ներկայացումը էլեկտրոնային փոստով կատարվում է անվճար:

47. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին սույն կանոնների 46-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացված լինելուց հետո 7 օրվա ընթացքում:

48. Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքանուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է կատարվի հանրապետական սիռման 2 հեռուստաընկերությունների միջոցով 2-ական անգամ, 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում: Ընդ որում, եթե սպառողը սույն կանոնների 46-րդ կետի համաձայն պահանջել է վճարման հաշիվը իրեն ներկայացնել գրավոր կամ էլեկտրոնային փոստով, ապա վերջինս պետք է զգուշացվի գրավոր կամ էլեկտրոնային փոստով: Զգուշացման վերաբերյալ գրությունը փոստով առաքելու պահանջի դեպքում՝ այդ ծառայության համար վճարում է սպառողը: Զգուշացումը էլեկտրոնային փոստով կատարվում է անվճար:

49. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարը իրավունք ունի.

ա) սահմանափակել սպառողի էլեկտրամատակարարումը մինչև պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորությունը՝ առնվազն 3 սպասարկման օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով նրան զգուշացնելուց հետո.

բ) վթարային կամ տեխնոլոգիական հզորությունների ապահովման վերաբերյալ Պայմանագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ ժամկետների լրանալուց հետո, առնվազն 3 սպասարկման օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով նրան կրկին զգուշացնելուց հետո:

50. Մատակարարը սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում իրավունք ունի նաև.

ա) ուշացրած յուրաքանչյուր օրվա համար պայմանագրով սահմանված չափով հաշվարկել տույժ, բայց ոչ ավելի, քան օրական չվճարված գումարի 0,1 %-ը: Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել պարտքի ընդհանուր գումարի 10 %-ը: Մատակարարը կարող է նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի արժեքի չվճարված գումարի նկատմամբ սկսել տույժի հաշվարկը հաջորդող ամսվա 20-ից, եթե դրանից առնվազն 7 օր առաջ սույն կանոնների 46-րդ կետով սահմանված կարգով տեղեկացրել է սպառողին նրա կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին: Հակառակ դեպքում տույժը հաշվարկվում է վճարման համար հատկացված ժամկետի ավարտից հետո.

բ) խախտմանը հաջորդող օրացուցային տարում 3 անգամ խախտումը կրկնելու դեպքում, վերջին խախտմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ, որի մեծությունը չպետք է գերազանցի սպառողի վերջին տարում օգտագործած էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքը:

Եթե սպառողը նման դեպքում հրաժարվում է կանխավճար տալուց կամ մատակարարի համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ ներկայացնելուց, ապա մատակարարն իրավունք ունի նաև սպառողին առնվազն 3 սպասարկման օր առաջ գրավոր կամ հեռախոսագրով զգուշացնելուց հետո դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը, եթե նա չունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն: Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն, ապա մատակարարը նրա էլեկտրամատակարարումը կարող է դադարեցնել միայն սույն կանոնների 49-րդ կետով նախատեսված ընթացակարգերն ապահովելուց հետո:

51. Պարտքի առկայության դեպքում մատակարարը կարող է չդադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը, եթե սպառողը ներկայացրել է մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց: Սույն կետը չի սահմանափակում մատակարարի իրավունքը պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու համար՝ ապահովելով սույն գլխով սահմանված՝ տվյալ սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման ընթացակարգերը:

Գ Լ ՈՒ Խ 10

ԲԱԺԱՆՈՐԴԻ ԷԼԵԿՏՐՈՍՏԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ԸՆԹԱՅՆԱԿՈՐԸ

52. Մատակարարը սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո սպասարկման օրերին պարտավոր է այն վերականգնել ոչ ուշ, քան՝

ա) նույն օրը՝ մինչև ժամը 17:30-ը, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել մինչև տվյալ օրվա ժամը 14:00-ն, կամ

մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

բ) հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել տվյալ օրվա ժամը 14:00-ից մինչև 17:30-ը, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

Գ Լ ՈՒ Խ 11

ՎՃԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ԿԱՍ ՀԱՇՎՈՒՄ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

53. Սպառողը վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում գրավոր դիմում է մատակարարին սխալն ուղղելու պահանջով: Մատակարարը սպառողի դիմումն ստանալու օրվանից՝ 5, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում՝ 15 սպասարկման օրվա ընթացքում պարտավոր է ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել սպառողին:

54. Մատակարարը վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում գրավոր տեղեկացնում է սպառողին և առաջնորդվում սույն կանոնների 53-րդ կետով սահմանված ընթացակարգով:

55. Եթե մատակարարը հաստատում է վճարման փաստաթղթում կամ հաշվում սխալի փաստը կամ սխալը հայտնաբերվում է իր կողմից, ապա ուղղումը հաշվի է առնվում ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում:

Գ Լ ՈՒ Խ 12

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՐՔԻ ՍԱՐՔԻ ԽԱՒՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌԿԱԾ ԷԼԵՎՏՐԱԲԵՐՈՒՄԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

56. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա է սպառված էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում, մատակարարը կատարում է սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի վերահաշվարկ: Վերահաշվարկը կատարվում է սխալ գրանցման պատճառը վերացնելու պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման օրն ընկած ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան 40 օր, երբ հաշվառքի սարքի սխալանքը հայտնաբերվել է մատակարարի կողմից, և ոչ ավելի, քան 60 օր՝ երբ հաշվառքի սարքի սխալանքը հայտնաբերվել է սպառողի կողմից:

57. Եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված չէ սպառողի կամ մատակարարի գործողություններով, ապա սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի խախտմանը նախորդող տարվա տվյալ եռամսյակի ծախս ունեցած ամիսների միջին օրական ծախսի և հաշվառքի սարքի սխալի հայտնաբերմանը նախորդող ամսվա համար ձևավորված միջին կշռության սակագնի արտադրյալով: Եթե այդ ժամանակահատվածում սպառողը ծախս չի ունեցել, ապա մատակարարը սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա միջին օրական ծախսի և նույն ժամանակահատվածի համար ձևավորված միջին կշռության սակագնի արտադրյալով: Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությունը, սպառողի հետ համաձայնեցնելուց հետո, հաշվի է առնվում առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող ընթացիկ հաշվարկային ամսվա համար տրվելիք էլեկտրաէներգիայի քանակության արժեքի վճարման փաստաթղթում: Ընդ որում, եթե սպառողն անհամաձայնություն է հայտնում վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակության վերաբերյալ, ապա նա սույն կանոնների 47-րդ կետով սահմանված ժամկետներում և կարգով պարտավոր է վճարել սպառած էլեկտրաէներգիայի՝ իր կողմից չվիճարկվող մասի համար: Նման դեպքում առևտրային հաշվառքի սարքը վերականգնվում է մատակարարի հաշվին: Առևտրային հաշվառքի սարքի վերականգնման նպատակով մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ բնակչության դեպքում՝ մինչև 1 ժամ, իսկ ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն չունեցող այլ սպառողների դեպքում՝ մինչև 3 ժամ: Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն, ապա մատակարարն առևտրային հաշվառքի սարքը վերականգնելու նպատակով պարտավոր է դադարեցման և վերականգնման ժամկետները համաձայնեցնել սպառողի հետ:

58. Եթե առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումը պայմանավորված է սպառողի գործողություններով, ապա մատակարարը սպառողի հետ կազմում է առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտ և կարող է դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը, բացառությամբ սույն կետի վերջին պարբերությամբ նախատեսված դեպքի:

Նման դեպքում սպառողի կողմից տվյալ ամսում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է խախտմանը նախորդող մեկ տարվա տվյալ եռամսյակի ծախս ունեցած ամիսների, իսկ այդ ժամանակահատվածում ծախսի բացակայության դեպքում

առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա, միջին օրական ծախսի հնգապատիկի չափով:

Սպառողը պարտավոր է վճարել առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտի հիման վրա հաշվարկված գումարը: Եթե մատակարարը դադարեցրել է սպառողի էլեկտրամատակարարումը, ապա այն պարտավոր է վերականգնել սույն կանոնների 52-րդ կետով սահմանված ժամկետներում և կարգով: Առևտրային հաշվառքի սարքը վերականգնում է մատակարարը՝ խախտման հայտնաբերման պահից առավելագույնը 3 սպասարկման օրվա ընթացքում: Առևտրային հաշվառքի սարքը վերականգնելու համար սպառողը պարտավոր է հատուցել մատակարարի կրած վնասը՝ հետևյալ չափերով.

ա) եթե հաշվառքի սարքերը՝ համաձայն հավատարմագրված անձի կողմից տրված եզրակացության, ենթակա են վերականգնման՝

2000 դրամ՝ 0,22 կՎ լարման սպառողների դեպքում,

5000 դրամ՝ 0,4 կՎ և բարձր լարման սպառողների դեպքում.

բ) եթե հաշվառքի սարքերը՝ համաձայն հավատարմագրված անձի կողմից տրված եզրակացության, ենթակա չեն վերականգնման՝

10000 դրամ՝ 0,22 կՎ լարման ինդուկցիոն հաշվիչներ ունեցող սպառողների դեպքում,

20000 դրամ՝ 0,22 կՎ ստատիկ կամ 0,4 կՎ ինդուկցիոն հաշվիչներ ունեցող սպառողների դեպքում,

120000 դրամ՝ 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների դեպքում:

Առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտին չհամաձայնելու դեպքում սպառողն իրավունք ունի 3 աշխատանքային օրվա ընթացքում այն բողոքարկել Հանձնաժողովում՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մատակարարին: Մատակարարն իրավունք չունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Հանձնաժողովը, ստանալով սպառողի դիմումը, գրավոր միջնորդում է չդադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ մինչև բողոքարկված ակտի վերաբերյալ որոշում կայացնելը: Վեճի լուծման նշված ընթացակարգը չի սահմանափակում սպառողի իրավունքը՝ ակտը բողոքարկել դատական կարգով: Միևնույն ժամանակ սպառողը սույն կանոնների 47-րդ կետով սահմանված ժամկետներում և կարգով պարտավոր է վճարել սպառած էլեկտրաէներգիայի՝ իր կողմից չվիճարկվող մասի համար:

59. Եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է մատակարարի գործողություններով, ապա մատակարարը՝

ա) վերահաշվարկում է սպառողի կողմից ծախսված էլեկտրաէներգիայի քանակությունը և վերահաշվարկի արդյունքները հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում,

բ) որպես տույժ սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում ձևակերպում է կանխավճար՝ վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքի 100 %-ի չափով, սակայն ոչ ավելի, քան 10000 դրամ՝ բնակչության և 50000 դրամ՝ մյուս բոլոր դեպքերում:

Գ Լ ՈՒ Խ 13

ՍՈՒՎՏՐՈՒՅԻՆ ՀՆԵՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃՆՏՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳԱՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

60. Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը կարող է իրականացվել ինչպես սպառողի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ:

61. Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են մատակարարի կողմից, այդ թվում՝ սպառողի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ սույն կանոնների 64-րդ կետով նախատեսված դեպքի:

Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը որոշվում է ստուգաչափման մասին իրավասու կազմակերպության գրավոր եզրակացության հիման վրա:

Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը մատակարարի նախաձեռնությամբ իրականացվելու դեպքում, վերջինս պարտավոր է այդ մասին առնվազն 1 օր առաջ գրավոր զգուշացնել սպառողին և նրա հետ պայմանավորվել ստուգման ժամկետների մասին: Սպառողը կարող է պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքերի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ դրանց ստուգաչափումը, կատարի իր ներկայությամբ: Մատակարարը պարտավոր է կատարել սպառողի պահանջը: Ստուգաչափմանը սպառողի չներկայանալը հիմք չէ այն չիրականացնելու համար:

62. Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը սպառողի պահանջով իրականացվում է նրա գրավոր դիմումի համաձայն: Սպառողի դիմումը ստանալուց ոչ ուշ, քան 10 սպասարկման օրվա ընթացքում մատակարարը պարտավոր է ստուգել սպառողի առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը և նրան ներկայացնել դրանց աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն:

63. Ստուգման արդյունքներով առևտրային հաշվառքի սարքերի խախտում փաստելու դեպքում մատակարարը պարտավոր է կատարել սպառողի սպառած էլեկտրաէներգիայի քանակության վերահաշվարկ: Վերահաշվարկը կատարվում է սույն կանոնների 58-րդ և 59-րդ կետերով սահմանված կարգով:

64. Սպառողը, իրար հաջորդող երկու տարիների ընթացքում մատակարարին երկրորդ անգամ առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում, պարտավոր է վճարել մատակարարին կանխավճար՝

- ա) միաֆազ հաշվիչների համար՝ 750 դրամ,
- բ) եռաֆազ հաշվիչների համար՝ 1500 դրամ:

Եթե ստուգման արդյունքներով արձանագրվում է առևտրային հաշվառքի սարքերի խախտում, ապա մատակարարը կանխավճարը հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում: Առևտրային հաշվառքի սարքերի ճշգրիտ աշխատանքի դեպքում կանխավճարը դիտարկվում է որպես առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար մատակարարին վճարված ծառայության վճար և սպառողին չի վերադարձվում:

65. Սույն գլխում ամրագրված դրույթները չեն սահմանափակում սպառողի իրավունքը իր առևտրային հաշվառքի սարքերի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների: Նման դեպքում մատակարարը պարտավոր է ապահովել սույն կետով սահմանված սպառողի իրավունքը, որն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

ա) մատակարարը պարտավոր է գրավոր դիմումը ստանալուց 5 սպասարկման օրվա ընթացքում սպառողի հետ պայմանավորվել առևտրային հաշվառքի սարքերի ապամոնտաժման ժամկետների մասին և նրան փաթեթավորված ու կնքված տեսքով հանձնել այդ սարքերը՝ դրանք ժամանակավորապես փոխարինելով համանման այլ առևտրային հաշվառքի սարքերով,

բ) սպառողը պարտավոր է ոչ ուշ, քան 10 սպասարկման օրվա ընթացքում մատակարարին վերադարձնել առևտրային հաշվառքի սարքերը և ներկայացնել դրանց ստուգման արդյունքների մասին իրավասու կազմակերպության գրավոր եզրակացությունը: Այն դեպքում, երբ ներկայացված եզրակացությամբ արձանագրված է առևտրային հաշվառքի սարքի խախտում, մատակարարը պարտավոր է առաջնորդվել սույն կանոնների 12-րդ գլխով սահմանված կարգով:

Սույն կետով նախատեսված դեպքում մատակարարն իրավունք ունի ներկա գտնվել առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման աշխատանքներին: Մատակարարի նման ցանկության դեպքում սպառողը պարտավոր է առնվազն 1 օր առաջ նրան պատշաճ կարգով տեղյակ պահել ստուգաչափման ժամկետների և վայրի մասին: Ստուգաչափմանը մատակարարի չներկայանալը հիմք չէ այն չիրականացնելու համար: Առևտրային հաշվառքի սարքի փոխարինման նպատակով մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը սույն կանոնների 57-րդ կետով սահմանված տևողությամբ:

Գ Լ ՈՒ Խ 14

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

66. Առևտրային հաշվառքի սարքերը կարող են փոխարինվել ինչպես սպառողի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ:

67. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը մատակարարի նախաձեռնությամբ իրականացվում է նրա միջոցների հաշվին: Նման դեպքում մատակարարը պարտավոր է ապահովել սույն կանոնների 57-րդ կետով ամրագրված ժամկետները:

68. Սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը իրականացնում է մատակարարը՝ սպառողի գրավոր դիմումի հիման վրա: Նման դեպքում սպառողը պարտավոր է մատակարարին վճարել կանխավճար սույն կանոնների 69-րդ կետում սահմանված չափով, որի մարումը սկսվում է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից մեկ տարի հետո՝ սպառած էլեկտրաէներգիայի արժեքից այն նվազեցնելու միջոցով:

69. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը սպառողի պահանջով իրականացվում է կանխավճարի հետևյալ չափերի վճարման պայմանով.

ա) միաֆազ ինդուկցիոն հաշվիչը միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 10000 (տասը հազար) դրամ,

բ) եռաֆազ ինդուկցիոն հաշվիչը եռաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 35 000 (երեսունհինգ հազար) դրամ:

70. Մատակարարը սպառողի դիմումը և կանխավճարի վճարումը հավաստող փաստաթուղթը ստանալուց հետո 5 սպասարկման օրվա ընթացքում պարտավոր է փոխարինել նրա առևտրային հաշվառքի սարքերը:

71. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից հետո մատակարարը պարտավոր է համապատասխան փոփոխություն կատարել Պայմանագրում և սպառված էլեկտրաէներգիայի արժեքը ընթացիկ ամսվան հաջորդող ամսվանից հաշվարկել սույն կանոնների 45-րդ կետի համաձայն:

Գ Լ ՈՒ Խ 15

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԴԻՍՈՒՍ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

72. Սպառողը մատակարարին կարող է դիմում-բողոք ներկայացնել գրավոր, բանավոր (հեռախոսագանգի միջոցով) և էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

73. Սպառողի բանավոր դիմում-բողոքին տրվում է բանավոր պատասխան, գրավոր դիմում-բողոքին՝ գրավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմում-բողոքին պատասխանը տրվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

74. Մատակարարը պարտավոր է ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որպեսզի սպառողները կարողանան նրան տեղեկատվություն հաղորդել իրենց դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի արժեքի և քանակությունների, վճարման ժամկետների, մատակարարի և սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ, ստանալ պարզաբանում:

75. Մատակարարը սպառողի դիմում-բողոքին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից առնվազն 15 սպասարկման օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար սույն կանոններով այլ ժամկետ սահմանված չէ:

76. Մատակարարը պարտավոր է սպառիչ պատասխան տալ սպառողի դիմում-բողոքին՝ հանգամանորեն ներկայացնելով սպառողի դիմում-բողոքի առնչությամբ գործող օրենսդրական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն սպառողին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ:

Գ Լ ՈՒ Խ 16

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒՅԺԵՐԸ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽՆԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

77. Մատակարարը պարտավոր է սպառողին վճարել տույժ՝ ծախսված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 20 % -ի չափով, բայց ոչ ավելի, քան 2000 դրամը, այն դեպքերում, երբ խախտել է՝

ա) սույն կանոնների 27-րդ կետում էլեկտրամատակարարման պլանային ընդհատման համար սահմանված ժամկետը,

բ) էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո սույն կանոնների 28-րդ կետում սահմանված ժամկետում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետը, բացառությամբ, եթե էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումները պայմանավորված են եղել էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջվող իրավիճակներով:

գ) առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման դեպքում սույն կանոնների 29-րդ կետում սահմանված ժամկետում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետը,

դ) վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մինչև սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելը սույն կանոնների 48-րդ և 49-րդ կետերում սահմանված ընթացակարգերը,

ե) վճարման համար հատկացված ժամկետի խախտման համար սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո այն վերականգնելու սույն կանոնների 52-րդ կետում սահմանված ժամկետում,

զ) սպառողի կողմից վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում սույն կանոնների 53-րդ և 54-րդ կետերում սահմանված ընթացակարգերը,

է) սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման սույն կանոնների 12-րդ գլխում սահմանված ընթացակարգերը,

ը) սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար սույն կանոնների 13-րդ գլխում սահմանված ընթացակարգերը,

թ) սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար սույն կանոնների 14-րդ գլխում սահմանված ընթացակարգերը,

ժ) սպառողի դիմում-բողոքին պատասխանելու համար սույն կանոնների 75-րդ կետում սահմանված ժամկետը:

:

78. Սպառողի կողմից ծախսված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքն ընդունվում է տվյալ տարում սպառողի ծախսած էլեկտրաէներգիայի արժեքի և տվյալ տարում ծախս ունեցած ամիսների քանակի քանորդին հավասար:

79. Հաշվարկված տույժը մատակարարը հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսում ծախսած էլեկտրաէներգիայի համար ներկայացվելիք վճարման հաշվում: Հաշվարկված տույժը վճարման հաշվում նշվում է առանձին տողով և նվազեցվում է ծախսված էլեկտրաէներգիայի արժեքից:

80. Մատակարարը սույն կանոնների 77-րդ կետում նշված խախտումների համար տույժի չի ենթարկվում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են մատակարարի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով)

բնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), սաբոտաժային գործողությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են մատակարարի գործունեությունը կամ հանգեցնում են նրա ստանձնած պարտավորության կատարման ձգձգմանը կամ դադարեցմանը՝ անկախ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

Գ Լ ՈՒ Խ 17

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«81. 6 կՎ և բարձր լարման մեկից ավելի առանձին օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից չանվող բազմաբնակարան շենքի սպառողների դեպքում սույն կանոնների 28-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ արտապլանային ընդհատման պահից էլեկտրամատակարարման վերականգնման համար սահմանված ժամկետը գործում է 2016 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը մատակարարը այդ բազմաբնակարան շենքերի սպառողների էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան 4 ժամվա ընթացքում:»

82 ուժը կորցրած 2012թ հոկտեմբերի 1-ից:

83. Մինչև 40 կՎԱ հզորությամբ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման դեպքերում սույն կանոնների 2-րդ գլխի դրույթները կիրառվում են 2010 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2010 թվականի հունվարի 1-ը տեխնիկական պայմաններն առաջադրում է մատակարարը, իսկ լրացուցիչ պայմանները՝ այն անձը, որի էլեկտրատեղակայանքներին միացվում է սպառման համակարգը: Տեխնիկական պայմանների կատարման առավելագույն ժամկետը սահմանվում է 2 տարի, եթե տրված տեխնիկական պայմաններում այլ ժամկետ չի նախատեսված: Տեխնիկական պայմաններով երկրորդ անկախ սնում կարող է տրվել միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է Դիմող անձի սպառման համակարգի նախագծով: Տեխնիկական պայմանները տրամադրելու համար մատակարարը Դիմող անձից գանձում է 2000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ծառայության վճար: Տեխնիկական պայմաններ տալու համար մատակարարի կողմից գանձված ծառայության վճարը վերադարձման ենթակա չէ: 6 (10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում նոր միացվող կամ վերակառուցվող սպառման համակարգը լարման տակ դնելու համար Դիմող անձը մատակարարին է ներկայացնում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը):

84. Սույն կանոնների 2-րդ գլխի դրույթները կիրառվում են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձանց վրա՝ 2013 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձանց սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների տրամադրումն իրականացվում է սույն կանոնների 83-րդ կետի համաձայն: